«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ինչպես զարգացնել սովորողների մոտ ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և ստեղծագործական կարողություն:

ՀԵՂԻՆԱԿ ՝ Պետրոս Մկրտումյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ IV, պատմություն

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Ինքնուրույնություն 5

Նախաձեռնողականություն 8

Ստեղծագործական կարողություններ 10

Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության, ստեղծագործական ունակությունների զարգացումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում 15

Եզրակացություն 19

Օգտագործված գրականություն 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է աշակերտների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Այս որակները օգնում են անձին հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում: Սովորողները այս որակների շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Դպրոցական տարիքի երեխաների մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը էապես կախված է մեծերից, հարազատներից և ուսուցիչներից, ովքեր շրջապատում են երեխային:

Ինքնուրույնությունը դպրոցում բավականին մեծ դեր ու նշանակություն ունի:

Մանկավարժների առջև բավականին հստակ պահանջ է դրված, աշակերտների մեջ սերմանել ինքնուրույնությունը, նախաձեռնողականություն, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը:

Կարևոր խնդիր է նաև սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար մոտենալ առկա խնդիրներին՝ չվախենալով ուսման մեջ առկա դժվարություններից:

Ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման և զարգացման մեջ հսկայական է ուսուցչի դերը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դասից դաս, դասարանից դասարան:

Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում նպատակ ենք դրել ուսումնասիրել աշակերտների ինքնուրույնության, նախաձեռնողականության, ստեղծագործականության խթանման գործընթացի առանձնահատկությունները: Այս նպատակի իրացման համար վեր են հանվել և առաջադրվել են հետևյալ կարևոր խնդիրներ.

➢ Ուսումնասիրել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման

հիմնական մանկավարժկան միջոցները

➢ Պարզել, թե ինչն է ազդում աշակերտների

ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման վրա:

➢ Առանձնացնել այն խնդիրները և դժվարությունները, որոնք առաջանում են աշակերտների ինքնուրույնության խթանման գործում:

➢ Առաջարկել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման ժամանակակից միջոցներ և եղանակներ:

Այսպիսով, հավելենք, որ դպրոցում՝ աշակերտների ինքնուրույնության խթանման առաջնային նպատակն է աշակերտի անձի և նրա ստեղծագործական ընդունակությունների զարգացումը: Այս նպատակի իրացմանն անհրաժեշտ է մոտենալ քայլ առ քայլ, կիրառելով տարբեր մանկավարժական միջոցներ, ուսուցման մեթոդներ և այլն:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական տարիքը, մանկավարժների և հոգեբանների կարծիքով, առավել կարևոր է երեխաների մեջ տարբեր որակների և հատկությունների զարգացման համար, որոնց օգնությամբ նրանք կկարողանան դրսևորվել հետագա կյանքում, կենսագործունեության տարբեր ոլորտներում: Այդպիսի որակներից են ստեղծագործական ակտիվությունը, ինքնուրույնությունը, վստահությունը, պատասխանատվության զգացումը, համառությունը և այլն: Այս տարիքում երեխայի կայացման կարևոր ուղղություններից է ինքնուրույնության զարգացումը, որը մեծապես որոշում է երեխայի հաջող գործունեությունը հետագա կյանքում:

Ինքնուրույնությունը ձևավորվում է աստիճանաբար՝ երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում, ընդ որում յուրաքանչյուր տարիքում այն ունի տարբեր հատկություններ և դրսևորման ձևեր: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր տարիքային փուլում անհրաժեշտ է, որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից համապատասխան չափաբաժիններով և ռացիոնալ կերպով՝ զարգացնելով անհրաժեշտ հմտություններ և կարողություններ երեխաների մեջ:

Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ, ինչպիսին է երեխայի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպով կարգավորում է սեփական վարքը և գործունեությունը: Վերջիններս, իրենց հերթին, դրսևորում են երեխայի կարողության մեջ՝ հաղթահարել դժվարությունները, որոնք հանդիպում են առաջադրված նպատակին հասնելու ճանապարհին:

Դպրոցական տարիքում աշակերտը սովորաբար ունի դրական տրամադրվածություն շրջապատող իրականության հանդեպ, սիրում է հետաքրքրվել և երևակայել: Այս տարիքում երեխան, որպես կանոն, արդեն հակված է սեփական կարծիքը ունենալու, սակայն մեծի հեղինակությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ այդ կարծիքի ձևավորման և զարգացման վրա: Այս ամենը անմիջականորեն ազդում է երեխայի և շրջակա իրականության միջև փոխազդեցությունների վրա: Կարելի է առանձնացնել ինքնուրույնության երեք հիմնական բաղադրիչներ.

1. Իրազեկություն՝ գիտելիք, հմտություն, փորձ

2. Ստեղծարար մտածողություն՝ ճկունություն, համառություն որոշում

կայաղնելիս, կրեատիվ մտածողության մեթոդների կիրառում

3. մոտիվացիա՝ ներքին՝ սեփական հետաքրքրվածությունը խնդրի լուծման

ժամանակ, ինքնակատարելագործման ձգտում և գիտելիքների կիրառում, և

արտաքին մոտիվացիա՝ նյութական խրախուսում և առաջխաղացում:

Գիտակցելով, որ ինքնուրույնությունը անձի կարևորագույն բաղադրիչներից մեկն է, բազմաթիվ ժամանակակից գիտնականներ ուշադրություն են կենտրոնացրել դրա էության ուսումնասիրության վրա: Իսկապես, ինքնուրույնության դաստիարակման խնդիրը ենթադրում է այդ ֆենոմենի հստակ սահմանում և դրա հատկանիշների առանձնացում:

Այսպես, ըստ Ս. Օժեգովի բառարանի, ինքնուրույն հասկացությունը ունի մի

քանի սահմանումներ.

➢ Անկախ, ազատ

➢ Անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն

➢ Մյուսներից առանձնացված

➢ Ինքնուրույն ուժերով կատարվող գործունեություն՝ առանց կողմնակի օգնության և

ուղղորդման

➢ Կողմնակի ազդեցությունից անկախ

Զ. Շինտարը ինքնուրույնության ֆենոմենը սահմանում է , որպես անկախություն, անձի ձգտում և ունակություն, գործողություններ կատարել առանց շրջապատող անձանց օգնության:

Դառնալ ինքնուրույն և նախաձեռնող օբյեկտիվ անհրաժեշտություն է և յուրաքանչյուր երեխայի բնական պահանջ: Սակայն, ինքնուրույն գործելու ունակությունը չի բացառում կողմնակի օգնության հնարավորությունը և, նույնիսկ, ցանկալիությունը: Ինքնուրույնությունը սահմանվում է ոչ միայն որպես ազատություն արտաքին ազդեցություններից և պարտադրանքներից, այլև որպես ընդունակություն հակազդել արտաքին ազդեցություններին և վերամշակել դրանք սեփական գիտակցության մեջ:

Ըստ մանկավարժական հանրագիտարանային բառարանի ինքնուրույնությունը սահմանվում է որպես անձի առանցքային որակներից մեկը, որն արտահայտվում է կարողության մեջ նպատակներ սահմանել և սեփական ուժերով հասնել դրանց իրականացմանը:

Միևնույն ժամանակ, ինքնուրույնության տակ ենթադրվում է անձի պատասխանատու վերաբերմունքը սեփական արարքների հանդեպ, ընդունակություն ցանկացած իրաիճակում գործել գիտակցված և նախաձեռնողական, կայացնել ոչ ավանդական և ոչ ստանդարտ որոշումներ:

Դ. էլկոնին դիտարկում է ինքնուրույնությունը, որպես անձի ինտեգրալային հատկություն, որն արտացոլում է անձի կոգնիտիվ և կամային հատկանիշները:

ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախաձեռնողականությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Չէ՞ որ մի բան է տարաբնույթ մտքեր ունենալ, իսկ մեկ այլ բան՝ այդ հանճարեղ մտքերը զարգացնելն ու կյանքի կոչելը՝ ձեռնարկելով հստակ քայլեր: Սա բավականին բարդ գործընթաց է, որում կարող են անկասկած բախվել հազարավոր խոչընդոտների: Սակայն նախաձեռնողականության հետ սերտ կապված խրթին ուղին ունի մի շարք դրական կողմեր:Նախաձեռնողական աշխատանքները սկսվում են աշակերտներով և ավարտվում դպրոցի անձնակազմի անդամների ներգրավվածությամբ:

Նախաձեռնողականությունն է այն շարժիչ ուժը, որն առաջ է մղում ամեն մի նոր միտք դեպի իրականություն: Այն հանգեցնում է դրական տեղաշարժի՝ երկրագնդի անդադար շարժին զուգահեռ:

Նախաձեռնության առկայությունը զգում ենք մեր գրեթե ամեն քայլում: Դրա համար պետք է չանտեսել այսքան կարևոր սկզբունքը և միշտ աշակերտներին ուղղորդել հանդես գալ նորանոր նախաձեռնություններով:

Սովորողների նախաձեռնողականության, ակտիվության, ինչպես նաև սովորելու ցանկության և ընդունակությունների զարգացման համար հիմք է նախապատրաստվում դեռևս առաջին ուսումնական շաբաթների ընթացքում: Սա է պատճառը, որ աշակերտների՝ սովորելու կարողունակության խնդիրների ուսումնասիրությունը կարևոր տեղ է զբաղեցնում ժամանակակից դպրոցի առանցքային խնդիրների շարքում: Այս համատեքստում կարևոր է նշել, որ աշակերտների ակտիվության ցուցանիշների բարձրացմանը նպաստում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշակերտների պատրաստվածությունը դպրոց հաճախելուն և նրանց ադապտացման շրջանի հաջող ընթացքը սկզբնաշրջանում: Երեխայի պատրաստվածությունը դպրոցին, իր հերթին, բնութագրվում է անձի ընդհանուր զարգացվածությամբ՝ ինտելեկտուալ, մոտիվացիոն, հաղորդակցական և ֆիզիկական առումներով:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ աշակերտների՝ նախաձեռնողակա-նության և սովորելու ընդունակության խնդիրը այսօրվա դրությամբ հանդիսանում է բավականին բարդ խնդիր, որն ունի ոչ միայն մանկավարժական հիմքեր, այլև խորը հոգեբանական: Այն կախված է բազմաթիվ գործոններից, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, երբ խոսքը գնում է աշակերտի նախաձեռնողականության գնահատման մասին:

Այս պայմաններում մանկավարժի առջև դրված է կարևոր խնդիր՝ նպաստելու աշակերտների ակտիվության և նախաձեռնողականության բարձրացմանը և դրան նպաստող գործոնների ակտիվացմանը ուսումնական գործընթացում:

Տվյալ հետազոտական աշխատանքի նպատակն է նպաստել աշակերտների ակտիվության և նախաձեռնողականության բարձրացմանը և գրանցել այն հանգամանքները, որոնք նպաստում են դրան: Այդ համատեքստում փորձ է կատարվել վեր հանել առանցքային խնդիրներ, որոնք անմիջականորեն նպաստում են աշակերտների ակտիվության և նախաձեռնողականության ցուցանիշների բարձրացմանը, կիրառելով տարբեր մանկավարժական մեթոդներ և մոտեցումներ: Մասնավորապես, առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Առանձնացնել ակտիվության և նախաձեռնողականության բարձրացմանը նպաստող գործոններ:
2. Առանձնացնել ակտիվության և նախաձեռնողականության գրանցման հիմնական եղանակները:
3. Նախագծային մանկավարժական մեթոդի կիրառմամբ ստեղծել իրավիճակներ՝ նպաստելու համար աշակերտների ակտիվության և նախաձեռնողականության բարձրացմանը:
4. Առանձնացնել այն գործոնները, որոնք ազդում են աշակերտի ակտիվության և նախաձեռնողականության վրա (այդ թվում ուշադրության պակաս, ներգրավվածության պակաս, համագործակցության պակաս, ստեղծագործական մտքի և մոտեցման պակաս և այլն):

Նշենք, որ դպրոցական ծրագրերը, որպես կանոն, կազմվում են միջին առաջադիմությամբ և սովորելու ընդունակություններով օժտված աշակերտների համար: Սակայն, ցանկացած դասարանում հանդիպում են երեխաներ, ում սովորելու կարողությունների մակարդակը կամ ստանդարտից բարձր է, կամ ցածր: Այսինքն, երեխաները մշտապես տարբերվում են իրենց պատրաստվածության մակարդակով, մտավոր ունակություններով, ուսումնական ընդունակություններով և մի շարք այլ գործոններով, ինչով էլ պայմանավորվում է մեկ դասարանում տարբեր ակտիվությամբ և նախաձեռնողականությամբ երեխաների մշտական առկայությունը: Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, որպես կանոն, ակտիվ են դասերին, ձգտում են արդյունավետ կերպով գիտելիքներ ստանալ, չեն խուսափում դժվարություններից:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից: Գոյություն ունի կարծիք, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ՝ ոչ: Սակայն, բազմաթիվ հոգեբանական և մանկավարժական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել:

Տվյալ խնդրի շուրջ առկա որոշ գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ստեղծագործականության խնդիրը տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների, մասնագետների կողմից: Այսպես օրինակ, Ե. Տունիկը, ով զբաղվել է է. Տրրնսի գիտական հայացքների խորին ուսումնասիրմամբ, ըստ վերջինիս հայեցակարգի մեկնաբանում է ստեղծագործականությունը, որպես անձի ընդունակություն, որը մշտապես գտնվում է զարգացման գործընթացում և կախված է բազմաթիվ ներքին և արտաքին պայմաններից, գործոններից:

Հեղինակն առանձնացնում է ստեղծագործականության հետևյալ չափանիշները.

➢ Մտքի սահունություն

➢ Մտքի ճկունություն

➢ Մտքի օրիգինալություն /յուրօրինակություն

➢ Մտքի մշակվածություն

Ն. Լեյտեսը նշում էր, որ ստեղծագործականությունը հզոր գործոն է հանդիսանում անձի զարգացման գործընթացում, որով բնութագրվում է տվյալ անձի պատրաստակամությունը փոխելու, հրաժարվելու կարծրատիպերից, ազդելու շրջակա իրականության վրա:

Այսպիսով, ստեղծագործականությունը սահմանվում է, որպես անձի ընդունակություն ծնելու նոր գաղափարներ գործունեության այս կամ այն ոլորտում, որոնք կնպաստեն առաջադրված խնդիրների էլ ավելի արդյունավետ լուծմանը: Այս ընդունակությունը կարող է արտահայտվել անձի մտածողության, ընկալման, երևակայության, էմոցիաների, ինչպես նաև իր գործունեության արդյունքների մեջ:

Սակայն ստեղծագործական գործընթացի կարգավորման զգացմունքային, էմոցիոնալ հիմքի առկայությունը դեռևս չի սպառում այս ֆենոմենի զարգացման մեխանիզմը երեխաների մոտ: Գոյություն ունեն նոր գաղափարների ստեղծման նաև այլ տեխնոլոգիաներ: Օրինակ, զարգացնող ուսումնառության հայեցակարգում ստեղծագործական գործընթացը կապվում է տեսական մտածողության հետ:

Այսպիսով, ստեղծագործականությունը աշակերտի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության և անձի առանձնահատկությունների, մտածողության առանձնահատկությունների հետ:

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում աշակերտների կրեատիվության, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Դպրոցականի ինքնուրույնությանը, ստեղծագործականությանը և նախաձեռնողականությանը նպաստելու համար անհրաժեշտ է երեխային հնարավորություն տալ ինքնուրույն մտածել և արտահայտել սեփական տեսակետը այս կամ այն հրցի շուրջ:

Ուսուցիչները նաև պետք է ձգտեն որպեսզի աշակերտը ինքնուրույն կատարի ուսումնական առաջադրանքները, առանց կողմնակի օգնության: Մեծ նշանակություն ունեն ինքնուրույն աշխատանքները և ստեղծագործական առաջադրանքները ուսումնական պրոցեսում: Ընդ որում, դրանց պարագայում օգնության աստիճանը կարող է կախված լինել կոնկրետ երեխայի առաջադիմությունից: Այսպես, օրինակ, մեկ աշակերտին խնդիրը լուծելու համար բավական է միայն կարդալ խնդրի տեքստը, մյուսին անհրաժեշտ է նաև այդ տեքստի համառոտագրությունը, իսկ երրերդ աշակերտին անհրաժետ է կազմել խնդրի լուծման հաջորդական պլան:

Դպրոցականների ինքնուրույնության զարգացմանը նպաստում է նաև արտադասարանային ընթերցանությունների կազմակերպումը, որոնց պարագայում դպրոցականներընն ինքնուրույն են ծանոթանում ստեղծագործություններին, իսկ դասերի ժամանակ կամ արտադասարանային գործունեության ընթացքում ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը կարող է զարգանալ ինքնուրույն, ստեղծագործական առաջադրանքներ կատարելու ընթացքում, օրինակ, խաչբառերի լուծում, վիկտորինաների կազմակերպում և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ճանաչողական ինքնուրույն գործունեություն ծավալելու և ստեղծագործական ունակությունների զարգացման վրա ազդում են ինչպես տարերայնորեն և հատուկ նպատակային կազմակերպված, այպես էլ բնական և սոցիալական գործոններ: Բացառիկ ազդեցություն է ունենում նաև այն միջավայրը, ուր գտնվում է երեխան, և ուր նա իրեն դրսևորում է որպես ազատ, ինքնուրույն անձ՝ համագործակցելով այդ միջավայրի հետ:

Ժամանակակից դպրոցում աշակերտը ուսումնական գործընթացում հանդես է գալիս, որպես ուսումնառության սուբյեկտ, համագործակցում է ուսուցչի և դասարանցիների հետ: Սա հենց այն առանձնային-կողմնորոշված ուսումնառության ոճն է, որը հանդիսանում է կրեատիվության զարգացման բարենպաստ գործոն: Հենց այսպիսի միջավայրում մանկավարժը պետք է առաջին հերթին ձգտի բարենպաստ պայմաններ ստեղծել՝ աշակերտների ստեղծագործականության լիարժեք զարգացման համար, քանի որ ստեղծագործականությունը թույլ է տալիս աշակերտին հանդես գալ, որպես ուսման գործընթացի ակտիվ մասնակիցը, իրականացնել սեփական մտահաղացումները:

Հիմնվելով իմ մանկավարժական փորձի վրա, կարող ենք հավաստիացնել, որ դպրոցականների մոտ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործականության զարգացմանը մեծապես նպաստում է ընտրության իրավիճակի ստեղծումը դասի ժամանակ, քանի որ հենց ընտրության իրավիճակն է նպաստում որոշակի աստիճանի ազատության ձևավորմանը: Այսինքն, այս պարագայում աշակերտը հնարավորություն է ստանում ինքնուրուն ընտրել այս կամ այն իրավիճակում վարքի առավել հարմար տարբերակը կամ խնդրի լուծման եղանակը: Նիևնույն ժամանակ, կատարելով ընտրություն առկա տարբերակների միջև, աշակերտը սովորում է նաև պատասխնատվություն կրել իր ընտրության համար, հետևաբար, նաև ստացված արդյունքի համար: Մանկավարժական գործընթացում կարևոր է, ոպեսզի այդ ազատությունը լինի պոզիտիվ, այսինքն ինքնաբավ: Ինչպես նաև դպրոցական տարիքում ինքնուրույնության և ստեղծագործականության զարգացումը առավել արդյունավետ է տեղի ունենում, քանի որ երեխաները այս տարիքում առավել հետքրքրված են շրջապատող իրականությամբ, պահանջ ունեն ինքնուրույն գործունեության, սակայն միևնույն ժամանակ, մեծի հեղինակությունը դեռևս նշանակալի է երեխայի համար, ինչն օգնում է մանկավարժին ուղղորդել աշակերտի գորրծունեությունը: Յուրաքանչյուր աշակերտ անհատականություն է, և ինքնուրույնության և ստեղծագործականության դրսևորման աստճանը յուրաքանչյուրի մոտ կարող է տարբեր լինել:

Փորձը ցուց է տալիս, որ կարելի է առանձնացնել մի շարք խնդիրներ, որոնք փոխադարձաբար կապակցված են աշակերտների ստեղծագործականության, ինքնուրույնության զարգացման հետ: Այդ խնդիրներն են.

✓ Երեխայի ստեղծագործական ունակությունների և ինքնուրույնության

զարգացում:

✓ Բանավոր խոսքի զարգացում

✓ Ինքնարտահայտվելու կարողության զարգացում

✓ Ազատ և անկաշկանդ շփում հասակակիցների և մեծերի հետ

✓ Համախմբված աշխատելու հմտությունների ձեռքբերում

✓ Աշխատասրության, պատասխանատվության, ուշադրության դրսևորում

✓ Գեղագիտական ճաշակի զարգացում

✓ Տեսածի, լսածի վերաբերյալ խոսելու կարողություն

✓ Իրավիճակը շտկելու կարողություն

✓ Բարդույթներից ազատագրում

Ենթադրվում է, որ ուսումնական գործընթացում աշակերտների ինքնուրույնութունը , նախաձեռնողականությունը և

ստեղծագործականությունը խթանելու հիմնական բաղադրիչ գործողություններն են.

✓ Խնդրի պլանավորում և բաշխում

✓ Համապատասխան նյութերի և դիդակտիկ միջոցների կիրառություն

✓ Ստեղծագործելու ազատություն

✓ Խրախուսում և գնահատում

✓ Իրավունքի պահպանում

✓ Հարգանք ընկերոջ կարծիքի նկատմամբ

✓ Համագործակցություն

Ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման նպատակով, ենթադրում եմ, որ աշակերտների մոտ ձևավորվելով որոշակի առումով ազատ տարածք: Սեփական մտքերը և կարծիքները արտահայտելու, բաց քննարկումներին մասնակցելու, ինչպես նաև դրանք ինքնուրույն խթանելու և կազմակերպելու համար, աշակերտները կարողացան բավականաչափ ինքնահաստատվել, ավելի վստահ և ինքնուրույն զգալ դասի ժամանակ և տնային հանձնարարություն կատարելիս: Շատ կարևոր գործոն է նաև ուսուցչի՝ խրախուսելու և աշակերտին սխալվելու իրավունք վերապահելու մարտավարություն: Իսկ այս գործոնները ինքնստիքյան բերում են անձի մոտ ստեղծագործական մտքի խթանմանը, առավել ազատ և անկաշկանդ ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

Ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործականությունը հիմնված են երևակայության, ինտելեկտի, գյուտարարության և ինքնակրթության վրա: Ինքնուրույնությունը և ստեղծագործականությունը, ինչպես նաև յուրաքանչյուր ընդունակություն, անընդհատ զարգացման կարիք ունեն: Կան մի շարք գործողություններ, որոնց իրականացման դեպքում բարձրանում է աշակերտների՝ ինքնուրույն աշխատելու ցանկությունը՝

✓ Հոգեբանական հատկանիշների վերլուծություն՝

✓ Մտքերի վերարտադրության մեթոդների ուսուցանում

✓ Խմբում աշխատելու կանոնների ուսուցում և դերերի բաշխում

Աշակերտների ինքնուրույնության բարձրացման կարևոր միջոց է մոտիվացիայի բարձրացումը:

Այսպիսով, դպրոցում սովորող աշակերտների ինքնուրույնությունը և ստեղծագործ ունակությունները խթանում են մանկավարժական հաջող գործունեությունը, որն իրականացվում է համապատասխն մեթոդների, միջոցների օգնությամբ, կիրառելով նորագույն տեխնոլոգիական միջոցներ:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հայ իրականության մեջ կրթությանը միշտ առանձնահատուկ նշանակություն է տրվել: Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը: Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել; Այսօր էլ պետական ու ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի բարելավումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը:

Պատմություն առարկայի դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ պատմական երևույթներին ծանոթացնելուց, պետք է լինի սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, պատմական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝ մարդասիրություն, բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ, որպեսզի հետագայում երեխաների մեջ զարգանա ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, ստեղծագործական հմտությունների ձևավորումը:

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվականմիջոցներ, մամուլ) միջոցով:

Հայկական պետականությանը նետված մարտահրավերները հրատապ են դարձնում հայրենիքի ապագա պաշտպանների պատրաստման խնդիրը: Այս գործը մշտական կատարելագործման կարիք ունի: Պատահական չէ, որ պետական մակարդակով խրախուսվում է երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Դրանում մեծ է ազգային հերոսների կերպարների հանրահռչակման և այդ ոգով

աշակերտներին կրթելու նշանակությունը: Հայ ժողովուրդն իր պատմության ողջ ընթացքում հերոսների պակաս չի զգացել, որոնց շնորհիվ դիմացել է հազարամյակների դաժան փորձություններին: Այդ հերոսների օրինակով մենք կրթում և դաստիարակում ենք մեր սաներին , որոնք իրենց իդեալն են դարձրել այս կամ այն նվիրյալին:

Հայոց ազատագրական պայքարի դրվագները հայության ինքնահաստատման և դաժան գոյապայքարի վկայություններն են, որոնք ոգևորում են սերունդներին՝ սովորեցնելով քննախույզ մոտեցում դրսևորել անցյալի իրադարձությունների նկատմամբ, կատարել ճշմարիտ եզրահանգումներ և քաղել իրատեսական դասեր:

Պատմության դասաժամերին է, որ աշակերտները, ուսուցչի օգնությամբ և ուղղորդմամբ, բացահայտում են, թե ովքեր են իրենք, ովքեր են իրենց նախնիները, որտեղ են ապրել, ինչ պատմություն ունեն, ինչ ներդրում ունեն համամարդկային մշակույթի ասպարեզում: Երբ որ աշակերտը ուսումնասիրում է հայոց պատմության հերոսական էջերը, ազատագրական պայքարի դրվագները, հերոսների անձնվիրումն ու հայրենասիրության բազում օրինակներ, ինքն էլ կարծես «վարակվում է և անպայման ձգտում հասնել այդ կերպարներին:

Ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման գործում մեծ դեր ունի ուսուցիչը:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձրարժեք ներկրող քաղաքացիներ, բարձրացնել նրանց մեջ ինքնուրույությունը, նախաձեռնությունը, մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը:

Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնողականություն, ստեղծագործական ունակություններ զարգացնելու համար կարևոր է ազգային մշակութային արժեքները ճանաչելու, վերաիմաստավորելու, երեխաներին ազգային ոգով դաստիարակելու անհրաժեշտությունը: Այսօր շատ կարևոր է ապահովել նոր սերնդի դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումներով, առանձնահատկություններով: Ազգային արվեստի, կենցաղի, խորհրդանիշների, հայրենի բնաշխարհի յուրահատկությունների, ժողովրդական բանահյուսության հետ ծանոթությունը, հաղորդակցումը,դա նպաստում է սովորողների ազգային բարոյական հիմքերի ձևավորմանը, որը միշտ էլ եղել է մանկավարժական գիտության հիմնական հիմնահարցերից մեկը:

Առաջնահերթություն է, որ աշակերտները բացահայտեն, հետազոտեն հայոց պատմության վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը և վերհանեն հույժ կարևոր

փաստերիցը մեկը, այն է որ հայ ժողովուրդը եկվոր չէ, այլ ձևավորվել ու պատմական հազարամյա ուղին անցել է իր բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում: Հայ ժողովուրդը, շփվելով և փոխազդեցությունների մեջ լինելով տարբեր քաղաքակրթությունների հետ, պահպանել ու զարգացրել էիր ինքնատիպ մշակույթը, ազգային նկարագիրն ու գոյապատկերը: Դրա շնորհիվ հայությունը հազարամյակների միջով հասել է մարդկության պատմության արդի փուլին:

Հայ ժողովուրդը մշտապես ապրել ու արարել է մի տարածաշրջանում, որտեղ միշտ հատվել ու բախվել են տարբեր ազգերի ու քաղաքակրթությունների շահերն ու հակասությունները: Այս հանգամանքն ավելի կարևոր է դարձրել այս քաղաքակրթական խաչմերուկներում ազգային նկարագիրն ու դիմագիծը անաղարտ պահելու հանգամանքը: Այս պայմաններում դարձյալ չափազանց կարևոր է առաջ գնալ ազգային ու պետական շահերը առաջնահերթություն ունենալու ճանապարհով և պատմական փորձը ցույց է տալիս, որ ինչպիսի ժամանակաշրջանի ծնունդ էլ լինեն պատմության ընթացքն ուղղորդող անհատները, նրանք միջազգային հարաբերություններում պետք է լինեն զգոն և հավասարակշռված:

Դպրոցականների շրջանում ինքնուրույնության, ստեղծագործական կարողությունների ձևավորման և խթանման համար կարևոր է անդրադառնալ ինքնաճանաչողության հարցերին:

Ինքնությունը բազմաթիվ անհայտներով մի կառույց է՝ պարուրված խորհրդանշաններով, տարատեսակ իրապատումներով, տեսլականներով ու առասպելներով, որոնք ժամանակի ընթացքում ստանում են տարբեր բացատրություններ: Այս առումով միշտ էլ առաջանում է ինքնության (ինքնաճանաչողության) պատմական ձևերի իմաստավորման, ավանդվածի մեկնաբանության և ազգային ինքնության տարրերի արդիականացման անհրաժեշտություն:

Ինքնաճանաչողությունը պարտադիր ենթադրում է երկխոսություն անցյալի հետ, որի ժամանակ անցյալը պետք է դառնա ներկայի մաս, ներկայի անցյալ, որովհետև ինքնության ցանկացած հարացույց անպատկերացնելի է առանց պատմական շերտի:

Սակայն մեզանում կարծես թե բացակայում է անցյալի հետ բովանդակային խոսույթը (դիսկուրսը). Մեր անցյալի պատմամշակութային ժառանգությունը գերազանցապես պահվում է ազգային գրադարաններում ու մատենադարաններում, հիմնականում՝ այլոց ցուցադրելու համար:

Դպրոցականների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունն ու ստեղծագործական ունակությունները խթանելու նպատակով պետք է սովորողներին հանձնարարել լրացուցիչ նյութեր հավաքել օրինակ, հայդուկների, ազատամարտիկների կյանքի, գործունեության վերաբերյալ: Այս ընթացքում սովորողները կհարստացնեն իրենց գիտելիքները տվյալ նյութի շուրջ, նաև կսովորեն ինքնուրույն օգտվել այլ աղբյուրներից, զատել տեղեկույթի կարևորն ու երկրորդականը, հանգել ինքնուրույն եզրահանգումների, ձևավորել սեփական դիրքորոշումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հենվելով թեմատիկ մանկավարժական գրականության ուսումնասիրության, ինչպես նաև իմ մանկավարժական գործունեության ընթացքում ձեռք բերված փորձի վրա, կարող եմ եզրակացնել, որ կրտսեր դպրոցականների մոտ ինքնուրույնության և ստեղծագործականակությունների զարգացման համար կարևոր է, որպեսզի երեխաների համար ստեղծվն սովորելու բարենպաստ պայմաններ, որոնց պարագայում նրանք հնարավորություն կունենան ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, գտնել խնդիրների լեւծումներ, հաղթահարել ուսումնառության ընթացքու հանդիպած դժվարությունները:

Այն աշակերտները, որոնց մեջ մանկավարժական հաջող գործունեության ընթացքում ձևավորվում են ինքնուրույնության հակումները, որպես կանոն, բավական մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ուսման հանդեպ, մեծապես ձգտում են նոր գիտելիքներ ստանալ, վերլուծություններ և մտահանգումներ կատարել: Այսպիսի աշակերտները ևս կարող են բազմաթիվ սխալներ կատարել իրենց ուսումնառության ընթացքում, սակայն նրանց առավելությունը կայանում է նրանում, որ կատարած սխալներից այս աշակերտները չեն հուսահատվում և փորձում են ուղղել այդ սխալներ:

Աշակերտի մեջ ինքնուրույնության ը նախաձեռնողականության զգացումը զուգորդվում է նաև ինքնավերահսկողության և կամային հատկանիշների զարգացմամբ: Այս համատեքստում կարևոր և առանցքային է նաև մանկավարժի դերը: Նրա խնդիրն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, որի պարագայում աշակերտները հետաքրքրված և շահագրգռված կլինեն ուսումնական գործընթացով, կձգտեն ակտիվության և նախաձեռնողականության, ինչպես նաև ընդհանուր ինքնուրույնության: Դրա համար մնկավարժը կարող է կիրառել ուսումնական գործունեության կազմակերպման նորագույն մեթոդները, տեղեկատվական տեխնոլոգիաները, աշակերտների հետ աշխատանք կատարելու անհատական և խմբակային ձևեր, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքներ և այն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը2.Հայոց ինքնության հիմնահարցեր., Սեյրան Զաքարյան, Երևան 2020 թ.

3.Белоысов А.К. //Психология общения 2015

4.Туник Е.Е Диагностика креативности

5. https://lib.armedu.am/category/56

6. https://usum.am/load/ashakertneri_inqnowrowyn_gorcowneowtyan_kazmakerpman_d_ery/128-1-0-3575